Արդշինբանկի **մոբայլ բանկինգով միջազգային փոխանցում** կատարելու ուղեցույց



Ardshinbank

ՔԱՅԼ 1

Մուտք գործեք
հավելված:



ՔԱՅԼ 2

Ընտրեք «Փոխանցել» դաշտը, որից հետո՝ «Միջազգային փոխանցումներ», այնուհետև սեղմեք «Նոր փոխանցում» կոճակը և լրացրեք անհրաժեշտ դաշտերը:





ՔԱՅԼ 3

«Ստացող բանկի երկիրը» դաշտում առաջարկվող ցանկից ընտրեք այն երկիրը, որտեղ ցանկանում եք փոխանցել գումարը, իսկ «Ընտրել փոխանցման արժույթը» դաշտում ընտրեք առաջարկվող արժույթներից:

«Ստացող բանկի SWIFT կոդը» դաշտում լրացրեք ստացող բանկի SWIFT կոդը, իսկ ՌԴ ռուբլիով փոխանցումների դեպքում՝ БИК կոդը: Եթե չունեք ստացող բանկի SWIFT կամ БИК կոդերը, ապա կարող եք դրանք գտնել՝ որոնելով ստացող բանկի անունը «Որոնել բանկի անունով» դաշտում:

Միջնորդ բանկի տվյալների առկայության դեպքում ակտիվարցեք համապատասխան կոճակը և լրացրեք համապատասխան դաշտերը: Անհրաժեշտ տվյալները լրացնելուց հետո սեղմեք «Շարունակել» կոճակը:



ՔԱՅԼ 4

Այնուհետև լրացվում են ստացող բանկի տվյալները. «Ստացողի անունը/անվանումը» դաշտում անհրաժեշտ է լրացնել Ստացողի անուն/ազգանունը կամ անվանումը, իսկ «Ստացողի հաշվեհամարը» դաշտում՝ գումարը ստացողի հաշիվը, որից հետո սեղմել «Շարունակել» կոճակը: Անհրաժեշտության դեպքում կարող եք պահպանել նշված փոխանցումը որպես Ձևանմուշ՝ հետագա օգտագործման համար:

Նշենք, որ 1-ից ավելի Ձևանմուշ նույն անվամբ պահպանել հնարավոր չէ:





ՔԱՅԼ 5

«Փոխանցման գումարը» պատուհանում նշեք փոխանցվող գումարի չափը: «Միջնորդավճարի տեսակը» դաշտում՝ միջնորդավճարի տեսակը՝ կախված փոխանցման արժույթից.

- OUR տարբերակն ընտրեք այն դեպքում, երբ Արդշինբանկի և թղթակից բանկի ծախսերը գանձվում են ուղարկողից:

- SHA տարբերակն ընտրեք այն դեպքում, երբ թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են ստացողից:

«Ելքագրել հետևյալ հաշվից» դաշտում ընտրեք այն հաշիվը, որից փոխանցումը պետք է կատարվի, իսկ «Ընտրել միջնորդավճարի գանձման հաշիվը» դաշտում՝ այն հաշիվը, որից պետք է գանձվի միջնորդավճարը:





ՔԱՅԼ 6

«Փոխանցման նպատակը» դաշտում ընտրեք առաջարկվող 3 տարբերակներից մեկը.

- Ոչ առևտրային նպատակով տարբերակը, եթե փոխանցումը կատարվելու է ոչ առևտրային նպատակով:

- Առևտրային նպատակով տարբերակը, եթե փոխանցումը կատարվելու է իրավաբանական անձին:

- Իր հաշվին տարբերակը, եթե ստացող բանկում փոխանցումը կատարվելու է սեփական հաշվին:

«Մանրամասներ» դաշտում լրացրեք փոխանցման նպատակը:



ՔԱՅԼ 7

«Նախնական դիտում» պատուհանում ստուգեք Ձեր կողմից լրացված բոլոր տվյալների ճշգրտությունը, որից հետո սեղմեք «Հաստատել» կոճակը՝ մուտքագրելով PIN կոդը կամ Face ID-ի միջոցով:



Շնորհավորում ենք

Գործարքը հաջողությամբ ավարտված է



Ardshinbank